. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հայ էսթետիկական մտքի պատմությունից, գիրք 1, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, 275 էջ

Դրախոսվող ժողովածուն «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» մատենաշարի ասաջին գիրքն է։ Այն բացվում է Յա. Խաչիկյանի տոաջաբանով, ուր նա անդրադառնում է հայ էսթետիկական մտքի ձևավորման ու զարդացման հիմնական շրջաններին, ինչպես նաև դրա ուսումնասիրության մեթոդաբանական հիմնական խնդիրներին, ժողովածուի գիտական նպատակադրման և կառուցվածքի հարցերին։ Միանգամայն համոզիչ են ու պատճառաբանված Յա. Խաչիկյանի նկատառումներն այն մասին, թե էսթետիկական մտքի պատմության առարկան պետք է լինի էսթետիկան իր պատմական զարդացման մեջ, էսթետիկական կոնցեպցիաների առաջացման ու զարդացման հետազոտումը։ Միաժամանակ նա մերժում է գեղարվեստական երկերը իբրև էսթետիկական մտքի պատմության աղբյուր օգտագործելու միտումը, ասաջ բերում այդ պատմության աղբյուրների, ինչպես նաև էսթետիկական տեսությունների կապերի ու փոխազդեցության բացահայտման խնդիրը։

Գ. Վ. Հակոբյանը «Գրիգոր Արծրունու էսթետիկական հայացքները» հոդվածում Արծրունու էսթետիկական ըմբռնումները քննում է նրա ազգային, սոցիալական, դաղափարական ծրագրի ու հայացքների լայն ֆոնի վրա։ Հոդվածագրին Արծրունու սոցիալական հայացքները հետաքրքրել են ոչ միայն նրա աշխարհայացքի էությունը բացահայտելու համար, այլև պարզելու վերաբերմունքը արվեստի սոցիալական բնույթի ու դերի մասին։ Գ. Հակոբյանը ցույց է տալիս, որ Արծրունուն ամենից առաջ դրավում էր հասարակության վրա անմիջական ներգործություն ունենալու գեղարվեստի կարողությունը։ Հետևարար, նա արվեստին պրակտիկ խնդիրներ էր առաջադրում։ Ուղղակի և պրակտիկ դերը արվեստին վերադրելը արդեն իսկ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչու Արծրունու համար լրագրողը, հրապարակախոսը, գրողը, նույնացվում էին։ Սոցիալական ու ազգային խնդիրների և բարոյական նորմերի իրականացման միջոցների մեջ նա խտրություն չէր դնում։ Նշված հոդվածի հեղինակը դա փորձում է բացատրել ժամանակի իրականության մեջ հարցի առանձնահատկությամբ և հրատապությամբ։ Ըստ Արծրունու՝ արվեստը իր բարձր կոչումը կարող է արդարացնել, եթե այն արտացոլում է հասարակության ու ազգի համար կենսական նշանակություն ունեցող թեմաներ ու պրոբլեմներ։ Արծրունու էսթետիկական կոնցեպցիաների ձևավորման ակունքները ցույց տալու համար Հակոբյանը տիպարանական զուգահեռներ է անցկացնում Հ. Տենի և Արծրունու հայացքների միջև և համոզում, որ Տենի պոզիտիվիստական ըմբռնումներն իրենց անմիջական ազդեցությունն է ունեցել Արծրունու էսթետիկական պատկերացումների վրա։

Արվեստի և հասարակական կյանքի ուղղակի և սերտ կապի պահանջը Արծրունուն բերում է այն համոզման, որ օտար գեղարվեստը, որքան էլ այն բարձր լինի իր արժանիքներով, չի կարող նույն դերը կատարել, ինչ ազգային դրականությունը։ Նա օտար դրականությունից ընդունում է այն հեղինակներին, որոնց արծարծած սոցիալական, բարոյական դաղափարները կարող են գործնական դեր խաղալ հասարակությունը, ազգը որոշակի նպատակների մղելու գործում։

Դրախոսվող ժողովածուում ուշագրավ է Յա. Խաչիկյանի «XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ կոմպոզիտորների էսթետիկական հայացքները» հոդվածը։ Ժամանակակիցների հուշերի, ուսաղիր և անտիպ նյութերի, նամակների և այլ աղբյուրների հիման վրա հոդվածագիրը ներկայացրել է Կարա-Մուրզայի, Ն. Տիգրանյանի, Կոմիտասի, Սպենդիարյանի էսթետիկական հայացքները։

Յա. Խաչիկյանը նկատում է, որ այդ կոմպոզիտորները, հատկապես Կոմիտասը, մշակութային այն բացառիկ գործիչներից էին, որոնք կարողանում էին հավասարապես զուգակցել ստեղծագործական և գիտական աշխատանքը։ Կոմիտասն ու Կարա-Մուրզան իրենց հոդվածհետազոտություններում վերլուծում ու բացահայտում էին մեր ազգային երաժշտության հա-

րստությունն ու ինքնատիպ մեղեդայնությունը, բարձրացնում ժողովուրդների երաժշտական արվեստի ազդեցության ու փոխազդեցության հարցերը։ Նրանք գտնում էին, որ չկա ընդհանրապես «անխառն ու անապակ» երաժշտություն։ Կարա-Մուրզան իր «Արևելյան տարրը եվրոպական երաժշտության մեջ» հոդվածում փորձել է մեկնաբանել ազդեցության պատճառները՝ բերելով կոնկրետ արևմտաեվրոպական այն կոմպոզիտորներին, որոնք իրենց ստեղծագործություններում օգտագործել են արևելյան մելոսը։

Իրականության և արվեստի փոխհարաբերության էսթետիկական համակարգի բացահայտման խնդրում հայ կոմպոզիտորների տեսակետները մեկնաբանելիս Խաչիկյանը մանրամասն քննության է առնում հատկապես Կոմիտասի հայացքները։ «Ամեն գեղարվեստ մարդկային ներսին, հոգեկան կյանքին արտահայտիչ է» (էջ 127), նկատում է Կոմիտասը, ուրեմն և այդ հոգեկանի արտահայտման ձևերից է։ Երաժշտությունը, ըստ Կոմիտասի, շարժման մի ձև է, որը «համապատասխանում է ներքին աշխարհի շարժողությանը, այսինքն՝ զգացումների և հույզերի» (էջ 128)։ Երաժշտության ազգային ոգու ու տրամադրությունների ձևավորման վրա ազդում են բազմաթիվ հանգամանքներ՝ բնությունը, ժողովրդի պատմությունը, հոգեբանությունը։ Հետևաբար՝ երաժշտությունը արտաքին աշխարհի ու մարդկային ներքին ընկալման բարդ համադրություն է։ Այդ պատճառով էլ հայ երաժշտության մշակողը պետք է ծանոթ լինի հայ մարդու ոգուն, էությանը, կյանքին։ Նույնիսկ բարձր պրոֆեսիոնալիզմը չի կարող իրեն արդարացնել, եթե անտեսվում է այս անհրաժեշտ կապը։

Գրախոսվող ժողովածուի հաջորդ ուսումնասիրությունը Յա. Խաչիկյանի և Ստ. Թոփչյանի «Հ. Թումանյանը և էսթետիկայի հարցերը» հոդվածն է։ Հոդվածում բացահայտվում են Թումանյանի՝ էսթետիկայի վերաբերյալ արտահայտած կարծիքներն ու տեսակետները, որոնք ցրված են նրա ողջ գրական ժառանգության մեջ։ Բանաստեղծի տեսական ժառանգությանը անդրադարձած գրականագետները հատկապես չեն առանձնացնում գրականագիտությունն ու էսթետիկան։ Գիտական լուրջ քննության են բռնում հեղինակները այն բացահայտումները, որոնք վերաբերում են բանաստեղծի՝ իրականության և գեղարվեստի, գեղեցիկի, գրականության ժողովրդայնության, ազգային ձևի մասին ունեցած կարծիքներին, դրանց էսթետիկական արժևորմանն ու գնահատմանը։

Հայ նեոռոմանտիզմի տեսական ժառանգության հետազոտման առումով ուշագրավ է Ստ. Թոփչյանի «Հայկական նեոռոմանտիզմի էսթետիկայի ուրվագիծ» խորագրով հոդվածը։ Ստ. Թոփչյանը գտնում է, որ Սիամանթոյի, Վարուժանի, Շանթի, Ռուբեն Սևակի տեսական-քննադատական ժառանգությունը լայն հնարավորություն է տալիս նրանց դասելու հայ նեոռոմանտիզմի ամենացայտուն դեմքերի շարքը։ Վերջիններիս տեսական, փիլիսոփայական հայացքներն ունենալով իրենց դրսևորման ազգային հողն ու ինքնությունը, հիմնական գծերով համապատասխանում են «Արևմտյան երկրներում ծավալված նեոռոմանտիկական» շարժման բնորոշ սկզբունքներին։ Հայկական նեոռոմանտիզմի տեսության ու էսթետիկայի բազմակողմանի քննությունը թողնելով հետագա ուսումնասիրողներին, Թոփչյանը առանձնացնում է այդ ուղղության կողմնակիցների էսթետիկական հիմնական ելակետերն ու հայեցակետերը։ Ինչպես արևմտաեվրոպական, այնպես էլ հայ նեոռոմանտիզմը բացառիկ մտավոր անհատներին՝ հանճարներին, առանձնացնում է որպես հասարակության, ազգային իդեալների խտացում, որոնց գործը պիտի շարունակեն նորերը։ Գաղափարական այս մղվածությունը հատկապես երևում է Սևակի «Թրուպատուրները» ծրագրային բանաստեղծությունից, ինչպես նաև Վարուժանի, Շանթի տեսական-էսթետիկական համոզմունքներից, որը և միաժամանակ նրանց քաղաքական ծրագիրն էր։ Հարցի հետագա քննությունը տրամաբանորեն հանգում է նեոռոմանտիկների առաջադրած «ժողովրդի և հերոսի կապի» անհրաժեշտությանը, որովհետև այդ հերոսը ոչ թե վերացական գերմարդն է, այլ «ճնշված ու նահատակվող ժողովրդի փրկության ու ազատության ուղիների որոնողը» (էջ 194)։ Այստեղից էլ առաջ Սիամանթոյի «Հայորդներ» շարքը, որտեղ մահվան, զոհաբերության գաղափարը ընկալվում է որպես կյանքի համար մարտնչելու, պատմություն կերտելու գաղափար։

Հայ նեոռոմանտիկների գեղարվեստական ժառանգության, գաղափարական ու էսթետիկական հայացքների հիմնական էությունը կազմող մյուս գիծը հեթանոս շարժումն էր։ Զոհաբերության ու հարության գաղափարը, ըստ Սիամանթոյի, կյանքի հարատևության գաղափարն է։ Արևմտահայ գրականության մեջ այս գաղափարը դրսևորվեց հեթանոս աստվածների վերադարձի և քրիստոնեական հոգևոր աստծու ժխտման ձևով։ Վերլուծելով Սիամանթոյի, Վարուժանի հեթանոս երգերը, ինչպես նաև «Նավասարդում» տեղ գտած արևմտահայ մտավո-

բականների հոդվածները, Թոփչյանը բացահայտում է հայ նեոռոմանտիկների էսթետիկական ըմբռնումները, որոնք նրանց հեթանոս ծրագրի բովանդակության անբաժան մասն էին կազմում։ Հեթանոս շարժումը մեղանում օրինաչափ երեույթ էր և ուղղակիորեն պայմանավորված էր հայ ժողովրդի ազգային անելանելի ճակատագրով։

Նեոռոմանտիկների համոզմամբ կյանքի համար մղված կռիվը, նկատում է ուսումնասիրության հեղինակը, կռիվ էր գեղեցիկի համար։ Այստեղից էլ բխում է նրանց «Գեղեցիկը և կյանքը» էսթետիկական դուպահնը։ Համադրելով Սիամանթոյի, Վարուժանի, Շանթի գրական ու տեսական հայացքները, Թոփչյանը դալիս է այն եզրակացության, թե որքան ճնշումները, բռնակալությունը խորանում են, այնքան գեղարվեստը ստանում է առավել մարտնչող, առավել ազատասիրական ոգի։ Այս պլանով Թոփչյանը «Կյանքին փառքը և ապրելու զեղեցկությունը», «Իրականությունը և երեակայությունը», «Գեղարվեստի իրական դերը» ենթավերնագրերի տակ անդրադառնում է հայ նեոռոմանտիզմին վերաբերող արվեստի բազմաթիվ կատեգորիաների, որոնք ընդհանրապես արվեստի համար համընդհանուր նշանակություն ունեն։

Գրախոսվող գիրքը սկիզբն է այն աշխատանքի, որ նախաձեռնել է փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը և իր դրական դերը կկատարի հայ էսթետիկական մտքի պատմության համակողմանի ու խոր հետազոտության խնդրում։

Մ. Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու